ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № 007/22

ք. Երևան 25 Հոկտեմբերի 2022թ.

«Զեզա»սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն Հ.Աֆյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ **Մատակարար**, մի կողմից և **«ՀՀ Արտակարգ Իրավիճակների Նախարարության աշխատակազմ »**, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Լ. Միրզախանյանի , ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ **Գնորդ**, մյուս կողմից, միաժամանակյա հիշատակման դեմքում՝ **Կողմեր**, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Մատակարարը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում Գնորդին մատակարարել ապրանքներ, այսուհետ՝ ապրանք, իսկ Գնորդը, պարտավորվում է սույն պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքներն ընդունել և կատարել ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

1.2. Ապրանքի տեսականին, քանակը որոշվում է կողմերի համաձայնությամբ՝ Գնորդի կողմից ըստ փուլերի ներկայացված բանավոր կամ գրավոր պատվերի՝ որոնց հիման վրա կազմվում են համապատասխան հավելվածներ՝ համարվելով սույնպայմանագրի անբաժանելի մասը:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1Ապրանքի մատակարարումը կատարվում է կողմերի միջև հերթական հաստատված հավելվածում նշված ժամկետում և գներով:

2.2 Մատակարարի պարտավորություններն ավարտվում են պատվերի խմբաքանակը Գնորդին հանձնելու պահից:

2.3 Մատակարարի կողմից ապրանքը Գնորդին սահմանված կարգով պատվերին համապատասխան հանձնելուց հետո Մատակարարի պարտավորություններն ու պարտականությունները Գնորդի նկատմամբ ավարտվում (դադարում) են: Այդ պահից Գնորդի և երրորդ անձանց նկատմամբ Մատակարարը որևէ պարտավորություն չի կրում:

2.4 Ապրանքների տեղափոխումը Մատակարարի պահեստից կատարվում է Գնորդի միջոցներով և հաշվին:

3. ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Մատակարարը պարտավոր է՝

3.1.1 Սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում ապահովել ապրանքների մատակարարումը՝ պահպանելով ըստ պատվերի Գնորդի ներկայացրած տեսականին, քանակը:

3.1.2 Պատվերը ստանալուց առաջ ողջամիտ ժամկետում Գնորդին տեղեկացնել մատակարարման պայմանների փոփոխման, մատակարարվող ապրանքների գների փոփոխության մասին:

3.1.3 Մատակարարման որևէ փուլում ապրանքների թերի մատակարարման դեպքում հաջորդ փուլում՝ սույն պայմանագրի գործողության ժամկետի սահմաններում լրացնել թերի մատակարարված քանակը:

3.1.4 Ապրանքները մատակարարելիս դրանց հետ տրամադրել նաև տեխնիկականան աձնագիր և երաշխիքային կտրոն:

3.1. Մատակարարն իրավունք ունի՝

3.1.1. Պահանջել վճարելու մատակարարված ապրանքի դիմաց՝ սույն պայմանագրով և հերթական հավելվածով սահմանված կարգով և ժամկետներում:

3.1.2. Գնորդիննորխմբաքանակիապրանքչտրամադրել, եթեխախտվածէսույնպայմանագրի 5.4-րդ ենթակետը:

3.1.3. Պահանջելով վճարելու տույժ չվճարված գումարների 0.1%-ի չափով յուրաքանչյուր ուշացված օրվ համար:

3.1.4. Գնորդի կողմից առանց սույն պայմանագրով նախատեսված հիմքերի ապրանքը չընդունելու դեպքում՝

3.1.5. պահանջել Գնորդից ընդունել այն և հատուցել չընդունման հետևանքով պատճառած վնասն ամբողջությամբ:

3.1.6. դադարեցնել իր պայմանագրային պարտավորությունների կատարումը:

3.1.7. լուծել պայմանագիրը վաղաժամկետ և Գնորդից պահանջել պատճառված վնասների հատուցում:

4. ԳՆՈՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Գնորդը երրորդ անձանց հետ հարաբերություններում գործում է բացառապես իր անունից:

4.2. Գնորդը իրավունք չունի երրորդ անձանց հետ հարաբերություններում գործել Մատակարարի անունից:

4.3. Երրորդ անձանց հետ Գնորդի հարաբերությունների համար Մատակարարը պատասխանատվություն չի կրում:

4.4. **Գնորդը պարտավոր է՝**

4.4.1. Պատվերը տալիս նշել ապրանքի տեսականին, քանակը:

4.4.2. Պատվերը ստանալուց սույն պայմանագրով և հերթական հավելվածով սահմանված կարգով և ժամկետում վճարել դրա արժեքը ներկայացված հաշիվ-ապրանքագրի հիման վրա:

4.4.3. Ապրանքը ստանալուց, դրա արժեքը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում Մատակարարի պահանջով, վերջինիս վճարել տույժ, ապրանքի արժեքի 0,1% չափով յուրաքանչյուր ուշացված օրվա համար:

4.4.4. Ապրանքը չվաճառել Մատակարարի մոտ գործող բացթողման գներից ցածր:

4.4.5. Խստորեն հետևել Մատակարարի կողմից տրամադրված համապատասխան տեխնիկական փաստաթղթերով /տեխնիկական անձնագիր և երաշխիքայինկտրոն (փոխհամաձայնագիր)/ ամրագրված պայմաններին, տեղափոխել, տեղադրել, շահագործել ու պահպանել ապրանքը տեխնիկականան աձնագրում ամրագրված պայմաններին և կանոններին համապատասխան:

4.4.6. Մինչև Մատակարարին նոր պատվեր տալը, վճարել մատակարարված ապրանքի նախորդ խմբաքանակի ընդհանուր գումարն ամբողջությամբ:

4.5.Գնորդն իրավունք ունի՝

4.5.1. Պահանջել Մատակարարից լրացնել թերի մատակարարված տեսականին, վերացնել պատվերի պահանջների անհամապատասխանությունը սույն պայմանագրի գործողության ժամկետի սահմաններում:

4.5.2. Պահանջել Մատակարարի կողմից իր պարտավորությունների չկատարմամբ կամ ոչ պատշաճ կատարմամբ իրեն պատճառված վնասների հատուցում:

4.5.3. Մատակարարի կողմից պատվերում նշված ապրանքի քանակի և տեսականու պայմանները խախտելու դեպքում Գնորդն իրավունք ունի հրաժարվել դրանք ընդունելուց:

5. Պայմանագրի ԳԻՆԸ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5.1. Ապրանքի գները սահմանվում են Մատակարարի կողմից հաստատված և մատակարարման պահին գործող փաստացիգ ներին համապատասխան:

5.2. Գնորդի կողմից վճարումը կատարվում է պատվերի հիման վրա հերթական հավելվածում նշված վճարման ժամկետում, տեսականուն քանակի հաշվարկով, Մատակարարի կողմից դուրս գրված հարկային հաշվի հիման վրա:

5.3. Պայմանագրի գինը կազմում է 583.600 (հինգ հարյուր ութսուներեք հազար վեց հարյուր) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ:

5.4. Կողմերի համաձայնությամբ Գնորդը մատակարարվող ապրանքների համար վճարումը կատարում է մինչև սույն թվականի դեկտեմբերի 22-ը:

5.5. Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարումը կատարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Մատակարարի բանկային հաշվին փոխանցելու միջոցով: Գումարի փոխանցման հետ կապված բոլոր ծախսերը կատարվում են Գնորդի հաշվին:

6. ԱՊՐԱՆՔԻ ԵՐԱՇԽԻՔԸ

6.1. Մատակարարված ապրանքների համար Մատակարարը տրամադրում է երաշխիք 12 ամիս ժամկետով: Երաշխիքային ժամկետը սկիզբը հաշվարկվում է՝ ուժ է ստանում ապրանքի մատակարարման օրվանից:

6.2. Մատակարարված ապրանքի համապատասխան տեխնիկական անձնագրով նախատեսված պայմանների կիրառմամբ ապրանքը տեղափոխելու, տեղադրելու, շահագործելու ու պահպանելու դեպքում ի հայտ եկած անսարքություններն ու թերությունները վերացվում են Մատակարարի հաշվին՝ տեխնիկական անձնագրում և երաշխիքային կտրոնում նշված երաշխիքային ժամկետի ընթացքում:

6.3. Երաշխիքային ժամկետը չի գործում և վերանորոգումը կատարվում է Գնորդի հաշվին, եթե չեն պահպանվել ապրանքի հետ տրված տեխնիկական անձնագրում նշված տեղափոխման, տեղադրման, շահագործման և պահպանման կանոնները, ինչպես նաև այն դեպքում երբ լրացել է տեխնիկական անձնագրում և երաշխիքային կտրոնում նշված ապրանքի վերանորոգման երաշխիքային ժամկետը:

6.4. Սույն պայմանագրի 6.2., 6.3. ենթակետերով սահմանված կարգով սպասարկման աշխատանքները կիրականացվեն միայն ապրանքի տեխնիկական անձնագրի, երաշխիքային

կտրոնի և Գնորդի լիազորված ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում:

7. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԿՈՄՊԼԵԿՏԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Ապրանքի որակը, քանակը, կոմպլեկտայնությունը պետք է համապատասխանեն Գնորդի կողմից ներկայացված նախնական պատվերին:

7.2. Մատակարարվող ապրանքի որակը և կոմպլեկտայնությունը պետք է համապատասխանի դրանց արտադրության վերաբերյալ գոյություն ունեցող տեխնիկական, կոնստրուկտորական փաստաթղթերին: Սույն պայմանագրով մատակարարվող ապրանքը պետք է լինի նոր և նախկինում չօգտագործված:

8. ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ

8.1. Սույն պայմանագրով Կողմերը մասամբ կամ ամբողջությամբ իրենց պարտականությունները չկատարելու համար ազատվում են պատասխանատվությունից, եթե չկատարումը հանդիսանում է անհաղթահարելի ուժի (երկրաշարժ, ջրհեղեղ, հրդեհ, պետական արգելք արտահանման և ներմուծման նկատմամբ և այլն) հետևանք, որոնք ծագել են պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխել:

8.2. Կողմը, որը հիմնվում է նմանատիպ իրավիճակի վրա, պարտավոր է եռօրյա ժամկետում մյուս կողմին գրավոր տեղեկացնել նմանատիպ իրավիճակի կանխատեսման մասին և նրա հասցեին ուղարկել այդ փաստը հաստատող հավաստի փաստաթուղթ՝ տրված Առևտրա-արդյունաբերական պալատի կողմից:

8.3. Անհաղթահարելի ուժի հանգամանքների ի հայտ գալու դեպքում Կողմերի պարտավորությունների կատարման ժամկետները հետաձգվում են այդ հանգամանքների և դրանց հետևանքների գործողության ժամանակին համաչափորեն:

8.4. Եթե անհաղթահարելի ուժի գործողությունը շարունակվում է ավելի քան վեց ամիս, Կողմերն իրավունք ունեն լուծել սույն Պայմանագրով պարտավորությունների հետագա կատարման հնարավորության կամ դրա լուծման հարցը, ինչի մասին Կողմերը կազմում են առանձին լրացուցիչ համաձայնագիր:

9. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

9.1. Սույն պայմանագրի պայմանների չկատարման, կամ ոչ պատշաճ կատարման դեպքում մեղավոր կողմը հատուցում է մյուս կողմին պատճառած վնասները ամբողջությամբ և լրիվ ծավալով՝ ՀՀ գործող օրենսդրության համաձայն:

9.2. Պայմանագրի կատարման ընթացքում ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով փոխհամաձայնությամբ: Համաձայնության չգալու դեպքում վեճը լուծվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

10. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

10.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրելու պահից և գործում է մինչև 2022թ-ի դեկտեմբերի 30-ը ներառյալ: Սույն պայմանագրի ժամկետը կարող է երկարաձգվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

10.2. Սույն պայմանագրի վերաբերյալ ցանկացած փոփոխություն և լրացում իրավական ուժ ունի, եթե այն կատարված է գրավոր ձևով և ստորագրված է Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

10.3. Մատակարարն իրավունք ունի ցանկացած պահի միակողմանի կերպով լուծել պայմանագիրը, եթե Գնորդի կողմից չի կատարվում սույն պայմանագրով ստանձնած ցանկացած պարտավորություն:

10.4. Պայմանագիրը լուծելուց հետո սույն պայմանագրով Կողմերի ստանձնած պարտավորությունները շարունակում են գործել և պահպանում են իրենց ուժը, քանի դեռ Կողմերը գրավոր փաստաթուղթ չեն կազմվել՝ միմյանց նկատմամբ պարտք ու պահանջ չունենալու մասին:

10.5. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու հավասարազոր օրինակներից, որոնցից մեկական օրինակ գտնվում է Կողմերից յուրաքանչյուրի մոտ:

10.6. Կողմերը ընդունում են սույն պայմանագրին առնչվող բոլոր փաստաթղթերի իրավական և գույքային նշանակությունը՝ անգամ, եթե դրանք փոխանցված են եղել հեռապատճենի կամ այլ միջոցներով և հաստատված բնօրինակ ստորագրությամբ ու բնօրինակ կնիքով:

11. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

11.1. ՄԱՏԱԿԱՐԱՐ
«ԶԵԳԱ» ՍՊԸ
ՀՀ Կոտայքի մարզ, գյուղ Առինջ, Պ. Սևակ թաղ,
8-րդ փող, 1/2 գրաս
ՀՎՀՀ 03540526
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570021272540100

Տնօրեն՝ Հ.Աֆյան

11.2. ԳՆՈՐԴ
«ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմ»
ք. Երևան, Դավթաշեն, 4-րդ թաղ.
Ա. Միկոյան109/8
ՀՎՀՀ 00153247
«ՖՖ ՖՆ Գործառնական վարչություն»
Հ/Հ՝ 900011035475

Գլխ. քարտուղար՝ Լ. Միրզաբեկյան

ՀԱՎԵԼՎԱԾ թիվ 1

Ք.Երևան

25 հոկտեմբերի 2022թ.

Սույն հավելվածը հանդիսանում է Երևան քաղաքում «Զեգա»ՍՊԸ-ի և «ՀՀ Արտակարգ Իրավիճակների Նախարարության աշխատակազմ»-ի միջև 25.10.2022 թ-ի կնքված թիվ **№ 007/22** մատակարարման պայմանագրի անբաժանելի մասը.

Համաձայն մատակարարման պայմանագրի Մատակարարը մատակարարում է ներքոհիշյալ ապրանքները, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել դրանք ամբողջ ծավալով և դրանց դիմաց վճարել մինչև 22.12.2022թ-ը:

Ապրանքի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Գինը	Արժեքը ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ
ԳՊ G 16K	հատ	1	500.000	500.000
Գազի ճնշման կարգավորիչ 40 մ3/ժ	հատ	1	70.7750	70.775
Գազային զտիչ FZ 2S Տպ 40	հատ	1	12.825	12.825
Ընդամենը				583.600

Սույն հավելվածը կազմված է երկու հավասարազոր օրինակից՝ յուրաքանչյուր կողմին մեկ օրինակ:

ՄԱՏԱԿԱՐԱՐ
«ԶԵԳԱ» ՍՊԸ
ՀՀ Կոտայքի մարզ, գյուղ Առինջ, Պ. Սևակ թաղ,
8-րդ փող, 1/2 գրաս
ՀՎՀՀ 03540526
«Ամերիա բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570021272540100

Տնօրեն՝ Հ.Աֆյան

«ԶԵԳԱ» "ЗЕГА" "ZEGA" 03540526

ԳՆՈՐԴ
«ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմ»
ք. Երևան, Դավթաշեն, 4-րդ թաղ.
Ա. Միկոյան109/8
ՀՎՀՀ 00153247
«ՖՖ ՖՆ Գործառնական վարչություն»
Հ/Հ՝ 900011035475

Գլխ. քարտուղար Լ. Միրզախանյան